

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Զարգացման հիմնական օրէնքը.—Վայրենիների համախմբում և քաղաքակիրթ հասարակութիւն.—Համախմբում ազգայնական սկզբունքով.—Երկու տեսակ նացիօնալիստներ.—Իրանց յարաբերութիւնը.—Համամարդկային համերաշխութիւն հաւասար ազգութիւնների մէջ.—Անհատական և միջազգային վէճերի լուծման օրինական միջոց.—Ձէխեր և գերմանացիներ.—Իրլանդացիներ և անգլիացիներ.—Իրլանդական օբստրուկցիա պարլամէնտում.—Իրլանդական լեզուն անգլիական պատգամաւորների ժողովում.—Իրլանդական պարլամէնտ և համալսարան.—Հողային հարցը Իրլանդիայում.—Բանակցութիւններ անգլիացիների և բօէրների մէջ.—Սօցիալիստ Զեվաէսի առաջարկը Ֆրանսիական պատգամաւորների ժողովում.—Դէրուլէդ և Ֆրանսիական նացիօնալիստներ.—Մակեդոնիայի պահանջները.—Եւրոպացի դիպլոմատների ընդդիմադրութիւնը Սան-Ստեֆանօյի դաշնագրութեան և դրա տխուր հետեանքները:

Զարգացումը (ըստ Սպենսէրի) ոչ այլ ինչ է, եթէ ոչ աստիճանական փոփոխութիւն՝ անորոշ, անկապ, հասարակ միատեսականութիւնից դէպի որոշ, կապակցուած, բարդ բազմատեսակութիւն: Զարգացման այդ ընդհանուր օրէնքից զերծ չեն կենդանիների, ուրեմն և մարդկանց հասարակութիւնները: Եթէ մենք համեմատենք վայրենի մարդկանց համախմբումները քաղաքակիրթ ազգերի հասարակութիւնների հետ, մենք կը նշկատենք նոյն օրէնքը. անորոշ, անկապ, հասարակ միատեսակութիւնից աստիճանաբար առաջ է գալիս որոշ, կապակցուած և բարդ բազմատեսակութիւն:

Վայրենիների կեանքում անհատների իրաւունքներն անորոշ են, անհատների փոխադարձ կախումն ու կապը շատ թույլ է, անհատները իրար շատ նման են, չը կայ աշխատանքի բաժանումն. իւրաքանչիւրը ինքն է շինում իր անպաճոյճ կեանքի համար բոլոր անհրաժեշտ իրերը: Մինչդեռ քանի բարձր է հասարակութիւնը իր քաղաքակրթութեամբ, այնքան որոշ են անհատների իրաւունքները, այնքան սերտ է դրանց փոխադարձ կապն ու կախումը, այնքան լիակատար է արտայայտուած աշխատանքի բաժանումը: Կարծես այդպիսի հասարակութիւնը՝

բոլոր անդամների բազմատեսակ մասնիկներից սերտ կապակցուած մի ամբողջութիւն, մի մարմին լինի:

Երբ քաղաքական որոշ սահմաններում ապրող անհատները, բացի տնտեսական և վարչական ընդհանուր պայմաններից՝ կապուած են և ընդհանուր լեզուով, պատմական անցեալով, մի խօսքով ազգայնական ընդհանուր հակումներով, այն ժամանակ մենք գործ ունենք մի կենտրոնաձիգ ոյժով (ազգայնութեան) միացած համախմբութիւն, որ ենթակայ է միայն ներքին հասարակական զարգացման և դասակարգային մաքառման: Բոլորովին այլ երևոյթի ենք հանդիպում, երբ որոշ տերրիտորիայի վրայ ապրող անհատները մի քանի կենտրոնաձիգ ոյժերի, մի քանի ազգութիւնների են պատկանում:

Վերցնենք, օրինակի համար, Աւստրիան. այդտեղ կայ ունգարական ազգայնական կենտրոնաձիգ ոյժ առանձին, չեխականը առանձին, լեհականը առանձին, գերմանականը առանձին, էլ չենք թւում այլ մանր-մունր ազգութիւնների ձգտումները: Բնականաբար հաւասարակշռութիւնը կարող է վերականգնուել, երբ դրանցից իւրաքանչիւրի կենտրոնաձգական տենչը գոհացում կը ստանայ. այսինքն, երբ իւրաքանչիւրը կ'ունենայ ազգային լիակատար ինքնուրոյնութիւն, երբ իրապէս հաւասարութիւն կը լինի այդ բոլոր ազգութիւնների իրաւունքների մէջ և մէկը չի լինի գերակշռող, հրամայող, իսկ միւսը՝ ճնշուած ու իր ազգային իրաւունքների մէջ սահմանափակուած: Համերաշխութիւնը, եղբայրութիւնը կարող է գոյութիւն ունենալ միայն հաւասարապէս անկախ անհատների մէջ, նոյնը ճիշտ է և ազգերի փոխադարձ յարաբերութիւնների նկատմամբ:

Երբեք չէլը չի հաշտուիլ գերմանացու հետ, իրլանդացին՝ անգլիացու հետ, քանի դեռ կը լինի դրանց իրաւունքների մէջ որ և է խտրութիւն: Ո՛չ մի տնտեսական ծրագիր չէ կարող գոհացնել դրանց ազգային պատուասիրութիւնը, մինչև որ դրանք չը ստանան իրանց ինքնուրոյնութիւնը: Ձէխի կամ իրլանդացու ձգտման մէջ չը կայ ուրիշին մեծանշու, ուրիշին հպատակեցնելու բռնակալական տարր, այլ լոկ ինքնապաշտպանութիւն, լոկ բնական մի պահանջ: Այդ է պատճառը, որ մարդկութեան աղնիւ մասը համակրում է դրանց ձգտումներին:

Բոլորովին այլ երևոյթ է գերմանացու կամ անգլիացու «նացիօնալիստական» կամ «խմպերիալիստական» ձգտումը: Այդ արդէն ուրիշներին նուաճելու, հարստահարելու և նրանց իրաւունքները սահմանափակելու անարդար մի ձգտում է. այդ դէպքում ուժեղը անձնապատահութեամբ դիմում է աւելի թոյլին

և ասում.—Քեզ չի կարելի այն, ինչ որ կարելի է ինձ. դու թոյլ ես, ուրեմն պէտք է բոլորովին հպատակուես ինձ և լաւ համարես այն, ինչ որ ես եմ ցանկանում. դու անչափահաս ես, իբրեւ ազգութիւն, և իրաւունք չունես ինքնուրոյն լինել քո սեփական գործերում:

Ինչպիսիք քօէրը, իրլանդացին չէ կարող իր մասին արդարացի համարել ուժեղ անգլիացու կարծիքը, ինչպէս չէիւր չէ կարող հաշտուել գերմանական գերիշխանութեան հետ. սկսում է մրցում ազգայնական հողի վրայ. և երբ խաղաղ օրինական պայքարը անգոր է, առաջ են գալիս ցոյցեր, օբստրուկցիա, ահաբեկումներ, կոխ և պատերազմ:

Մի ժամանակ մարդկային հասարակութեան անդամների մէջ եւս վիճող կողմերը արդարութիւնը իրանց սրբի ծայրերին էին գտնում: Մենամարտութիւնը Աստուծու դատաստան էր ճանաչում: Քաղաքակրթութիւնը վերացրեց այդ բարբարոս հասկացողութիւնը և անհատին դրաւ օրէնքի և անաչառ դատաստանի հովանու տակ: Այժմ մնում է, որ նոյն քաղաքակրթութիւնը վերացնի և ազգերի փոխադարձ վէճերից բռնեցքի իշխանութիւնը և միջազգային օրէնքի ու դատաստանի հովանու տակ դնի ազգերի իրաւունքը: Այդ մարդավայել ձգտումը հաւանութիւն գտաւ աշխարհիս ամենահզօր պետութեան առաջնորդի, ռուսաց կայսրի կողմից. սակայն ազգերը կառավարող զիպլօմատները դժուարութեամբ են հրաժարւում դարերով վարժուած սովորութիւններից և առայժմ Հաագայի համաժողովի որոշումները մնում են դեռ բարի ցանկութիւններ:

Անցեալ համարի Արտաքին Տեսութեան մէջ մենք տեսանք, թէ ինչ ձևով սկսուեց աւստրիական պատգամաւորների ժողովի առաջին նիստը: Դժուար չէր դուշակել, որ յաջորդ նիստերում տեղի են ունենալու աւելի սկանդալեօզ տեսարաններ՝ չէիս և գերմանացի նաչիօնալիստների մէջ, ինչպէս և եղաւ: Քիչ մնաց որ խօսքից, հայհոյանքից, գործը տուրուղմիոցի հասնէր:

Միացած իրլանդական կուսակցութիւնն էլ անգլիական պարլամենտում է բռնել մարտական դիրք և սառնարիւն անգլիայիները պատգամաւորների ժողովում ստիպւած եղան դիմել պօլիցիային՝ 12 անհնազանդ իրլանդացի պատգամաւորներին հեռացնելու համար: Երբ համայնքի լիդէր (պարագլուխ) Բալֆուրը առաջարկեց քուէարկութեան՝ կառավարութեան 17 միլ. ֆ. ստերլինգ բաց թողնելու հարցը և ըստ սովորութեան պատգամաւորները սկսեցին ցրուել դահլիճից դէպի հարեան սենեակները՝ ձայները թուելու համար, իրլանդացիներից մէկը բացականչեց. «Մենք չենք հեռանալ դահլիճից. մենք բողոքում

ենք, որովհետև 17 միլիոնի հարցը վճռուած է, թէ՛ն իրլանդացիները դեռ չեն յայտնել իրանց կարծիքը»:

«Խնդիրը վճռուած է» — ասաց մասնաժողովի նախագահը և հրաւիրեց իրլանդացուն կարգի: Իրլանդացիները չէին ուզում հեռանալ դահլիճից և բողոքում էին: Համայնքի նախագահը (սպիկէր) պահանջեց՝ անյապաղ հեռանալ: Իրլանդացիներից 12 հոգի չէին ուզում շարժուել իրանց տեղերից և սպիկէրը ստիպուած էր հրաւիրել ժողովը պօլիցիականներ, որոնք ոչփով դուրս բերին անհնազանդ իրլանդացիներին:

Պարլամէնտի օրէնսդրական զբաղմունքները՝ ապագայում այդ տեսակ օբստրուկցիայից ազատելու համար Բալֆուրը առաջարկեց պարլամէնտին, որ այսուհետև այն պատգամաւորները, որոնք չեն հնազանդուիլ սպիկէրի հրամանին, չը նայած պօլիցիա հրաւիրելու նրա սպառնալիքին, դրանով պէտք է համարուեն հեռացրուած պատգամաւորական ժողովի ամբողջ նստաչըջանի ընթացքում: Եւ օրինապահութիւնը շատ բարձր գնահատող անգլիացիները ահագին մեծամասնութեամբ, 264 ձայնով ընդդէմ 51-ի, ընդունեցին այդ առաջարկը:

Նոր քաղաքական երևոյթ էր անգլիական պարլամէնտում և մի այլ դէպք. իրլանդացի պատգամաւոր Օ' Դոննէլ փորձեց իր ճառը արտասանել իրլանդերէն և ոչ անգլիերէն: Այդ չը տեսնուած նորմութեան դէմ բողոքեց սպիկէրը՝ կարգի հրաւիրելով «իրան անյայտ բարբառով» խօսող պատգամաւորին: — Ես խօսում եմ իմ մայրենի լեզուով և ինձ անյայտ է կանոն, որ արգելում լինէր պարլամէնտում խօսել իրլանդերէն, — պատասխանեց Օ' Դոննէլը:

Իրլանդացիների ձգտումը լաւ բնորոշում է նրանց պատգամաւորների պարագլուխ Ջոն Րէդմոնդի Նիւկէստլում արտասանած ճառը: «Իրլանդացիների նպատակը կայանում է ազգային անկախութիւն ձեռք բերելու մէջ. չը պէտք է յոյս դնել անգլիացիների վրայ, որոնք չեն ուզում հասկանալ, որ մինչև չը տրուի իրլանդացի ժողովրդին անշատ և անկախ ազգ լինելու իրաւունք — Իրլանդիան երբէք չէ կարող գոհ լինել: Իրլանդիան պէտք է ունենայ իր սեփական ինքնավարութիւնը, Գլադստոնի ծրագրած սեփական պարլամէնտը»:

Իրլանդացիները ուզում են ունենալ իրանց հայրենիքում և սեփական կաթողիկոսական համալսարան:

Իրլանդացիների անբաւականութեան անտեսական պայմանը հողային հարցն է: Հողը Իրլանդիայում մեծ մասամբ պատկանում է անգլիացի կալուածատէրերին, լինդ-լորդերին, որոնցից կապալով հողաբաժիններ են վերցնում իրլանդացի ա-

գորակատէրերը (ֆերմէր): Կապալի պայմանները շատ ծանր են և Իրլանդիայի բոլոր թարմ ոյժերը գերադասում են՝ իրանց թշուառ հայրենիքից գաղթել Ամերիկա: Վերջին 20 տարուայ ընթացքում Իրլանդիայից գաղթել են 1,500,000 հոգի: Այդ չարիքի առաջն առնելու համար Իրլանդական ժողովրդի ներկայացուցիչները պահանջում են հողաբաժինների ստիպողական յետ գնումն կալուածատէրերից, այն էլ պետական գանձարանի օգնութեամբ: Անգլիան պէտք է փոխ տայ Իրլանդիային 120 միլիոն, որ պէտք է գործ դնուի լէնդ-լօրդերից հողեր գնելու վրայ, և միայն 20 տարուայ ընթացքում Իրլանդիան մաս-մաս պարտաւորուում է վերադարձնել այդ փոխառութիւնը: Այլ խօսքերով՝ Իրլանդացիները պահանջում են, երկրագործների համար այն, ինչ որ արաւ ուսաց կառավարութիւնը իր գիւղացիների համար *):

Անգլիան, մանաւանդ հիմա, երբ ահագին միջոցներ է կլանում հարաւ-աֆրիկական դժբախտ պատերազմը՝ յանձն չէ առնում ընդունել հողերի ստիպողական յետ գնումը և թողնում է ամեն բան լէնդ-լօրդերի յօժար կամքին: Առհասարակ բօէքները շատ թանգ նստացրին անգլիացիներին, դրանց դիպլօմատներին և կապիտալիստներին ջանքերով սկսած անարդար պատերազմը, և դեռ յայտնի չէ, թէ երբ կ'աջողուի Կիտչենէրին և Միլնէրին համողել Դեյվէտին և Բօտային որ՝ անձնատուր լինեն: Առայժմ անգլիական կառավարութեան խոստումները՝ տալ բօէքներին ներում, տեղական լայն ինքնավարութիւն և մինչև անգամ բօէքների խանդարուած տնտեսութիւնը և աւերակ տները վերականգնելու համար խոշոր փոխառութիւն— դեռ չեն ներգործել այդ քաջերի վրայ:

Յրանսիայում կրօնական միաբանութիւնների հարցի քըննութիւնը դեռ չը վերջացաւ պատգամաւորների ժողովում: Սօցիալիստ Զեպէսի առաջարկը— իսպառ վերացնել Յրանսիայում բոլոր կրօնական միաբանութիւնները — մերժուեց ձայների առաւելութեամբ (515 ձայնով ընդդէմ 34-ի): Վալդէկ-Րուսսօն յայտնեց, որ չէ կարող ընդունել այդ առաջարկը, որովհետև օրէնքով քոյաւսուած միաբանութիւնները օգուտ են բերում՝ նպաստ տալով 70 հազար չքաւորներին: Սակայն հարց է, միթէ կառավարութիւնը ինքը չէր կարող նոյնը անել: Անկասկած դրա համար պահանջում է շատ աւելի արմատական ուղղութիւն, քան որին հետևում է Վալդէկ-Րուսսօն: Յրանսիայի ներկայ հասարակական կարգերի ծնունդ է և կղերական դպրոց-

*) Տե՛ս ներքին Տեսութիւն:

ներքի աջողութիւնը. նոյն այդ պայմանների ծնունդ է և Բուլան-
 փէների ու Դերուլէզների փորձերը—տապալել հասարակապե-
 տութիւնը: Դերուլէզը վերջերում ակնյայտի ցոյց տուեց, թէ
 ինչ բարոյական ոչնչութիւններ են ֆրանսիական նացիօնա-
 լիստները. այդ անափառ Տարտարէնը նորից ցանկացաւ խօսակ-
 ցութեան առարկայ դառնալ և զբաղեցնել իր երեւելի անձով
 աշխարհը. նա մի շարք անբաստանութիւններ բարդեց իր եր-
 էկուայ դաշնակիցների վրայ և նորանոր սկանդալներով իր մասին
 դարձեալ խօսացնել տուեց հասարակական կարծիքը: Դերուլէզը
 «նացիօնալիստներին» այն տիպերից է, որոնք ի չարն են գործ
 դնում ժողովրդի անկուլտուրական խաւերի նախապաշարմունք-
 ները՝ իրանց անափառ և ստոր կրքերին գոհացում տալու համար:
 Ամեն ազգի մէջ կան Դերուլէզներ, որոնց երբեք չը պէտք է
 չլիթել իսկական հայրենասէրների հետ...

Աւելի խոշոր տիպերի մէջ աւելի ևս ակներև է այդ եր-
 կու ձևի հայրենասիրութեան տարբերութիւնները. օրին. Գլա-
 դստօն և Բիսմարկ ուղղակի հակապատկերներ են:

Առաջին տեսակ հայրենասէրի համար, օրինակ, գոյութիւն
 չունէր ատելութիւն դէպի մի այլ ազգ և նա յետին մտքերով
 դէմ չէր լինիլ ոռւս-տաճկական պատերազմից յետոյ ընդունել
 Սան-Ստեֆանօյի դաշնագրութիւնը, և մարդկութիւնը անշուշտ
 ազատուած կը լինէր անթիւ ոճիրներից. բայց Բիկօնաֆիլդ-
 Բիսմարկները իրանց չարամիտ «հեռատեսութեամբ» դուրս ե-
 կան անհամեմատ կարճատես, որ պարզ է ամեն մէկի համար,
 ով մօտ ծանօթ է թիւրքական ըեփիմին:

Ռուսաստանին խանգարեցին իր ժամանակ թիւրքական
 լծի տակից հանել Մակեդոնիան և միացնել Բուլղարիային:
 Ի՞նչ շահեց զբանից Եւրոպան, որ ամեն օր պէտք է սպասի
 նորանոր արիւնհեղութիւններին Բալկանեան թերակղզու այն
 մասում, որ հակառակ Ալէքսանդր II-ի ցանկութեան, մնաց
 թիւրքական ըեփիմի արիւնաշաղաղ ճիրաններում: Ծիշտ է,
 Բերլինի դաշնագրութեամբ սուլթանը պարտաւորուեց անյա-
 պաղ մտցնել բարենորոգումներ թէ Մակեդոնիայում և թէ թիւր-
 քական այլ նահանգներում, բայց ինչ արաւ եւրոպական դիպ-
 ւումաւորան՝ իր որոշումներն իրագործելու համար: Ոչինչ: Եւ
 այժմ մակեդոնացիները թէև առաջարկում են հէնց այն, ինչ
 որ պարտաւոր էր համաձայն Բերլինի համաժողովի որոշման,
 մտցնել թիւրքիան, բայց նրանք հալածւում են իրանց արդար
 պահանջների համար: Ծանօթանալով այդ պահանջների հետ,
 որ տպուեց ոռւսաց շատ թերթերում, գծուար չէ տեսնել, որ
 Մակեդոնիան սուլթանի ծայրագոյն իշխանութեան դէմ ոչինչ

է անաշարկում, այլ խիստ օրինական հողի վրայ է կանգնած։

Մակեդոնիան անաշարկում է. 1) Սալօնիկի, Մօնաստրի և Իւսկուբի վիլայէթներէց կազմել մի նահանգ, Սալօնիկի գըլխաւոր քաղաքով. 2) Նահանգի մէջ գերակշռող ազգութիւնից նշանակել հինգ տարով մի գեներալ-նահանգապետ. 3) Այս վերջինը պիտի կառավարի նահանգը, ժողովրդից ընտրուած ներկայացուցիչների ընդհանուր ժողովի միջոցով. պէտք է երաշխաւորութիւն տրուի փոքրամասնութեան իրաւունքներին։ Ընդհանուր ժողովը իր կարծիքն է յայտնում բոլոր խնդիրներում, որ վերաբերում են նահանգի ներքին կառավարութեան. 4) Նահանգի բոլոր ընակիչների համար անխտիր պէտք է երաշխաւորուի անձի ազատութիւն և տան անձեռնմխելիութիւն։ Ցենզուրան պէտք է վերացնուի. 5) Բոլոր պաշտօնեաները պիտի նշանակուեն նրանց ծառայութեան տեղում գերակշռող ազգութիւնից. բարձր պաշտօնեաները նշանակուած են սուլթանից, սակայն գեներալ-նահանգապետների առաջադրութեամբ, իսկ աւելի ստորին պաշտօնեաներին նշանակում է ուղղակի ինքը գեներալ-նահանգապետը. 6) Բոլոր հիմնարկութիւնների մէջ նահանգի գլխաւոր լեզուներն ընդունել հաւասար տաճկակաւնին, մի և նոյն ժամանակ իրաւունք տալով վարչութեան մարմիններին՝ այդ լեզուներից մէկն ու մէկը ընտրել պաշտօնական յարաբերութիւնների համար. 7) Ձանազան քրիստոնեայ ազգութիւնները իրանք են հիմնում իրանց ուսումնարանները, առանց կառավարութեան կամ իշխանութեան միջամտութեան. 8) Կարգը և հասարակական խաղաղութիւնը պահպանելու համար հիմնուած է միլիցիայի մի գունդ, որ կազմուած է նահանգի իւրաքանչիւր ազգութեան ընակիչների թուի համեմատ— նրա թիւը չը պէտք է 10/0-ից աւելի լինի ազգաբնակչութեան արական մասի թուից. միլիցիայի գլխաւորութիւնը յանձնուած է գեներալ-նահանգապետին. բարձրաստիճան ղինուորականները՝ գեներալ-նահանգապետի առաջադրութեամբ նշանակում է սուլթանը, իսկ ստորին աստիճանի սպաները նշանակում են գեներալ-նահանգապետից. 9) Բիւզժէտը և հարկերը որոշում է ընդհանուր ժողովը. եկամուտների 250/0 մտցնում է տէրութեան ընդհանուր գանձարանը՝ կայսրութեան պէտքերի համար. 10) Գեներալ-նահանգապետի հետ միասին նշանակում է մի մասնաժողով տեղական ազգաբնակչութեան ընդարձակ ներկայացուցչութեամբ. այդ մասնաժողովը գեներալ-նահանգապետի նախագահութեամբ մշակում է մտցուելի բեֆօրմների մանրամասնութիւնները. 11) Պէտք է շնորհուի ընդհանուր ներումն քաղաքական բանտարկուածներին և բոլոր արտորուածներին.

12) նոյն բեֆօրմները պէտք է մտցնուեն Աղբիւնօպօլի վիլայէթում:

Դժուար չէ համոզուել, որ այդ ծրագիրը ձեռնտու է և թիւրք ժողովրդին և նրանից միայն կարող են տուժել անձնական քմահաճ բնօրինից օգտուող թիւրք պաշտօնեաները:

Եւ այդպէս ահա Մակեդոնիայի քրիստոնեաները ստիպուած են իրան անթիւ զրկանքներ ու տանջանքներ կրել միայն այն պատճառով, որ եւրոպական դիպլոմատիան, եսամոլ և կոյր նախանձից դրդուած չուզեց ընդունել Ալէքսանդր II-րդի մարդասէր որոշումները թիւրքիայի քրիստոնեաների նկատմամբ:

Լ. Ս.